ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
24	կիսաճտքավոր կոշիկներ (տղամարդու զինվորական)	Աշոտ Ղարագյոզյան ՍՊԸ	Բաղկացած է կոշկերեսի քթամասից, կրնկամասից՝ ամբողջական բարձրությամբ հետնամասի գոտիով, ճտքերից, լեզվակից, փափուկ եզրակից, հիմնական ներդիրից, մաշվածադիմացկուն ներբանից (տակացուից) և հանովի-դնովի ներդիրից: Քթամասը մշակված է ամբողջական առաջամասով, ճտքով և կրնկամասում՝ ամբողջական բարձրությամբ հետնամասի գոտիով: Լեզվակը ամրացված է առաջամասին և ճտքերին: Բոլոր դետալները իրար միացվում են սոսնձով և կարվում են սինթետիկ թելով, որի կարը թույլ չի տա ջրի և խոնավության ներթափանցումը ճտքավոր կոշիկի ներսամասի դետալներ: Երեսամասը պատրաստված է խոշոր եղջերավոր անասունի բնական սև կաշվից, մշակված անջրաթափանց ծածկույթով: Կոշկերեսի քթամասի և հետնամասի կաշվի հաստությունը կլինի 1.8-2.2 մմ, լեզվակը՝ 1.1-1.3 մմ, ճտքերը՝ 1.6-1.8 մմ: Ճտքի քուղերի անցքերը մշակվում են 7-9 զույգ (կախված կոշիկի չափսերից) կոճականցքերով՝ պատրաստված պլաստմասսայից (պատրաստված հատուկ նշանակության պլաստմասսայից) կամ

			մետաղական՝ պատված պաշտպանիչ ներկով, որը կապահովվի խոնավ և ցածր ջերմաստիճանի ժամանակ կորոզիայից: Քուղերը պատրաստված են ամուր, անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից, յուրաքանչյուրի վերջույթները թերմոմշակված են: Կոշիկի ճտքերի բարձրությունը 40-44 միջին չափսի համար 21-23 սմ է, մնացած չափսերի շեղում՝ ±3.0 մմ: Բարձրությունը չափվում է ճտքի արտաքին մասով, կրնկամասում ներբանի և ճտքի միացման եզրից մինչև ճտքի վերին եզրը: Ներբանին ամրացվող հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված, 2.0-2.6 մմ հաստության բնական հումքից՝ պադոշից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Կաշվե դետալները հակառակ կողմից մշակված կլինեն տաքացվող սոսնձով գործվածքով, որը կտա երեսամասին հավելյալ ամրություն և կհաղորդի չափավոր ծավալային կայունություն: Ներբանը արտադրվում է միաձույլ, մաշվածադիմացկուն ռետինից և ապահովում է հետքերի զարդանախշերից ինքնամաքրումը: Ամրանում է բարձր ճնշմամբ, սոսնձման եղանակով: Պատրաստված կլինի մաշակայուն թերմոպլաստիկ կաուչուկից: Ներբանը գետնին հպվում է հարթ, առանց ճոճվածքի: Ճտքերի վերնամասը երկկողմանի մշակվում է կաշվով, որի միջուկը մշակվում է 2 մմ հաստությամբ ինքնասոսնձվող պոլիեթիլենային փրփուրով: Հարթ կաշվով արտադրելու դեպքում քթամասը ներսի հատվածից մշակվում է բյազ կամ գաբարդին տեսակի կտորով, իսկ նախշով (նակատով) կաշվից արտադրելու դեպքում՝ թույլատրվում է նաև կաշվե ներդիրով: Հանովի-դնովի ներդիրը պատրաստված է բնական հումքից՝ լավ հարթեցված պադոշից: Քթամասը և կրունկամասը ներսից մշակվում է թերմոպլաստիկ նյութով, ընդ որում քթամասը 2.0-2.4 մմ, իսկ կրնկամասը՝ 2.6-3.0 մմ հաստությամբ: Կոշիկի կաղապարը համապատասխանում է ԳՈՍՏ 3927-88-ի պահանջներին: Կարերի ամրությունը համաձայն ԳՈՍՏ 447՝ պետք է լինի 115 Ն/սմ (կամ 11.5 կգ/սմ), փորձարկումը կատարվում է համաձայն ԳՈՍՏ 9292: Արտաքին տեսքը համաձայնեցվում է Գնորդի հետ: Փաթեթավորումը ստվաթղթե արկղերով, 1 արկղի մեջ 10-15 զույգ, արկղերը՝ պիտակավորված,

			պիտակների վրա նշված կլինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Կոշիկի չափերի քանակները տրամադրվում է Գնորդի կողմից: Արտադրվում է 38-47 չափերի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО АШОТ КАРАГЕЗЯН в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	товарный знак	наименование производителя	технические характеристики
24	-	-	-